ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արտակ Դավթյանի, Կարինե Աճեմյանի, Արտակ Ջաքարյանի, Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Արմեն Մխիթարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը՝ պայմանավորված հանրապետությունում հեռարձակման թվային համակարգի ներդրմամբ: Այնուամենայնիվ ներկարացված օրենքի նախագծում առկա են մի շարք հայեցակարգային և տեխնիկական թերություններ: Մասնավորապես՝

1) օրենքում օգտագործվող հասկացություններում ներմուծվել են սահմանումներ, որոնք մեր կարծիքով խեղաթյուրում են առարկայի (երևույթի) բովանդակությունը և կարիք ունեն

լրացուցիչ քննարկման.

2) վերանայման կարիք ունեն նախագծով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին վերապահված լիազորությունները.

3) օրենքի նախագծի՝ լիցենզավորման գործընթացներին վերաբերող դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին՝ միաժամանակ հաշվի առնելով նաև լիցենզավորման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած պետական քաղաքականության ուղղվածությունը:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 15.1-ին և 15.2-րդ պարբերություններում «դուստրն» բառը փոխարինել «դուստր ընկերությունն» բառերով:

2. Նախագծից հանել 10-րդ հոդվածի «ա» կետը, քանի որ դրանով նախատեսված օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետն ուժը կորցրած է ճանաչվել 2011 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-327-Ն օրենքով:

3. Նախագծի 11-րդ հոդվածի 1.5-րդ կետի «գ» ենթակետը խմբագրել՝ սպառիչ և հստակ նշելով խորհրդի անդամի թափուր տեղի համար մրցույթի անցկացման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: Նույն հիմնավորմամբ խմբագրել նաև նախագծի 17-րդ հոդվածի 5.2-րդ կետի «3-րդ» ենթակետը:

4. Նախագծի 31-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպիսի իրավական հետևանքներ են առաջանում Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից, իր իրավասության սահմաններում խախտումը վերացնելու և մեղավոր անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին մեկամսյա ժամկետում Ազգային հանձնաժողովին չհայտնելու դեպքում՝ նկատի ունենալով

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի պահանջները:

Իրավական տեխնիկայի առումով առաջարկում ենք՝

1. Նախագծի 1-ին հոդվածով կատարված հղումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին՝ «ՀՕ-97-Ն» բառը փոխարինելով «ՀՕ-97» բառով:

2. Նախագծի 4-րդ հոդվածում «ինտերնետ» բառը փոխարինել «համացանց» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:

3. Նախագծի 9-րդ հոդվածում «մասը» բառը փոխարինել «մասում» բառով, «բառակապակցությունը» բառը՝ «բառերը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների՝ համապատասխանաբար խմբագրելով նաև նախագծի 10-րդ հոդվածը:

4. Նախագծի 17-րդ հոդվածում «պարբերություն» բառը փոխարինել «պարբերությամբ» բառով: Նույն հոդվածի 5.4-րդ կետի «դ» ենթակետում «բառակապակցությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «բառերը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների:

5. Նախագծի 18-րդ հոդվածում «ձևակերպմամբ» բառը փոխարինել «բառերը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների:

6. Նախագծի 20-րդ հոդվածում «վերանվանել» բառը փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների:

7. Նախագծի 32-րդ հոդվածի «ա» կետում «բառը» բառը փոխարինել «թիվը» բառով,

«բառով» բառը՝ «թվով» բառով: Նույն հոդվածի «գ» կետում «բառերը» բառը փոխարինել «թվերը» բառով, իսկ «բառերով» բառը՝ «թվերով» բառով՝ համապատասխանաբար խմբագրելով նաև նախագծի 33-րդ հոդվածը:

8. Նախագծի հոդվածների մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լուրջ և արմատական լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումները կընդունվեն օրենքի ընդունումից հետո չորս ամսվա ընթացքում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) լրամշակված նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

“Հեռուստատեսության և ռադիոյի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” N 18-Ն որոշման համաձայն:

Նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվում է հեռուստառադիոհեռարձակման գործընթացը:

Նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծով կարգավորվող շրջանակներն առնչվում են *հեռուստառադիոհեռարձակման* ծառայությունների շուկաների հետ:

Նախագծով հանրային հեռարձակման թվային ցանցում ընդգրկվելու համար հեռուստառադիոընկերությունը պետք է ունենա նախ *հեռուստահեռարձակման լիցենզիա*, այնուհետև մասնակցի հանրային հեռարձակման թվային ցանցում ընդգրկվելու *մրցույթին* և ապա միայն ստանա *հանրային հեռարձակման թվային ցանցում* ընդգրկվելու լիցենզիա: Այսինքն, Նախագծով հանրային հեռարձակման թվային ցանցում ընդգրկվելու համար պահանջվում է կրկնակի լիցենզիավորում, որը տվյալ շուկա մուտք գործելու խոչընդոտներ է ստեղծում՝ սահմանափակելով շուկայի մասնակիցների քանակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *բացասական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ***բացասական*** ազդեցություն է նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

- Նախագծում պահպանված չեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման հերթական քայլերի և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 636-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի պահանջները: Մասնավորապես, Նախագծով սահմանվում է հեռուստառադիոհեռարձակման լիցենզիայի տրամադրման համար ներկայացվող հայտին կից ներկայացնել նաև կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի և իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները:
- Նախագիծը հակասություններ է առաջացնում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով արդեն իսկ սահմանված հեռուստառադիոհեռարձակման համար նախատեսված լիցենզիայի դրույթների հետ, ինչը տարընթերցումների տեղիք է տալիս և կավելացնի վարչարարությունը ոլորտում գործող տնտեսվարողների համար:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի կապակցությամբ
ՀՀ կառավարության 10.09.2009թ. N 1021-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն բյուջետային բնագավառում ազդեցության գնահատման վերաբերյալ

1. Նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման առարկան և արդյունքները.

Նախագծով նախատեսվում է թվային հեռարձակման ներդրման կապակցությամբ հստակեցնել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հիմնադրման, հեռուստաընկերությունների լիցենզավորման և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները կանոնակարգող օրենքով սահմանված դրույթները:

2. Նորմատիվ իրավական ակտերի նախագծի ընդունման կամ չնդունման դեպքում՝ դրանց կիրարկման արդյունքում նախատեսվող հետևանքները և բյուջետային բնագավառի վրա դրանց ազդեցությունն ըստ ժամկետների.

Նկատի ունենալով, որ նախատեսվում է հստակեցնել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հիմնադրման, հեռուստաընկերությունների լիցենզավորման և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները կանոնակարգող օրենքով սահմանված դրույթները, գտնում ենք, որ ՀՀ օրենքի հիշյալ նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում ՀՀ պետական բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում: